ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

21.03.2019թ.

ք. Երևան
ժամը՝ 10:00
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Խ. Կարապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԳԱ-գնահատող անձնակազմ
Ն. Քալաշյան
Հ. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԲԱ-բացող անձնակազմ
Գ. Մկրտչյան
Թ. Զուլալյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Տ. Սաֆարյան

1. «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում տեղ գտած անհամապատասխանության վերաբերյալ

(Խ. Կարապետյան)

Ընդունել ի գիտություն, որ.

1.1 «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Մրցույթ) շրջանակում գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ.-ի թիվ 2 որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից՝ «Կարիզա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (այսուհետ՝ Մասնակից) (ՀՎՀՀ՝ 04418508) պահանջվել էր սահմանված կարգով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը՝ այդ թվում հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Մասնակիցը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

1.2 Հիմք ընդունելով Կարգի 46-րդ կետը՝ սույն արձանագրության 1.1 կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել են որոշ անհամապատասխանություններ, մասնավորապես.

Մրցույթի հրավերի N 1 հավելված՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով (այսուհետ՝ Բնութագիր) նախատեսված է եղել ձեռքբերել տեսաձայնային հաղորդակցման համակարգ (այսուհետ՝ Համակարգ) և այլ օժանդակ կոմպոնենտներ, որը Բնութագրում սահմանված չափանիշների համաձայն պետք է ունենար կառավարման համակարգ (Բնութագրի 10-րդ կետ): Միաժամանակ վերոնշյալ կառավարման համակարգը, ինչպես նաև հիմնական սարքը և հավելյալ/օժանդակ տեխնիկական սարքավորումները պետք է լինեին լրակազմ (կոմպլեկտ՝ միևնույն ապրանքային նշանի), ինչը սահմանվել է Բնութագրի այլ անհրաժեշտ պայմաններ բաժնի առաջին պարբերությունում: Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 6.1՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (այսուհետ՝ Հավելված) ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում Բնութագրով սահմանված Համակարգի լրակազմ լինելու սկզբունքին:

Բնութագրի այլ օժանդակ կոմպոնենտներ բաժնի 5-րդ պարբերությամբ անհրաժեշտ է եղել ձեռքբերել պատին ամրացնելու հարմարանք, որը պետք է նախատեսված լիներ առնվազն 60 (վաթսուն) դյույմ անկյունագծով սարքի համար և լիներ շարժական: Մասնակցի կողմից վերոգրյալ պահանջի առնչությամբ Հավելվածում որևիցե տեղեկատվություն չի ներկայացվել:

Բնութագրի այլ օժանդակ կոմպոնենտներ բաժնի առաջին կետի առաջին պարբերությամբ նախատեսվում էր ձեռքբերել պատկերի արտացոլման համար նախատեսված սարք, որի առաջին, երրորդ և չորրորդ

պարբերություններում ներկայացված են եղել տեխնիկական անհրաժեշտ չափորոշիչներ, որոնք, սակայն, Մասնակցի կողմից ներկայացված Հավելվածում նշված մոդելի սարքի չափորոշիչների հետ չեն համընկնում:

Միաժամանակ Մասնակցի կողմից հստակ սահմանված չէ Բնութագրի յոթերորդ կետի երկրորդ պարբերությամբ ներկայացված՝ առնվազն երկու պատկեր արտացոլող սարքի միանալու պահանջը, որը պատվիրատուի կողմից հավելյալ արտոնագրերի/բանալիների ձեռքբերման անհրաժեշտություն չպետք է առաջացնի: Մասնակցի կողմից ներկայացվել է տվյալ պահանջը բավարարող տեխնիկական բնութագրիչ, սակայն հստակ սահմանված չէ վերոգրյալ արտոնագրերի/բանալիների առկայության հանգամանքը:

1.3 Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է գնահատման նիստը: Հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը որոշելու մասին.

(Խ. Կարապետյան)

2.1 Գնման ընթացակարգը ընդհատել մինչև կառավարության որոշմամբ սահմանված՝ փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետը:

2.2 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի մարտի 22-ին, Մ.Մկրտչյան 5բ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝

_____ Խ.Կարապետյան

Անդամներ՝

_____ Ն. Քալաշյան

_____ Հ. Սարգսյան

_____ Գ. Մկրտչյան

_____ Թ. Զուլալյան

Քարտուղար՝

_____ Տ. Սաֆարյան